

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

«Լոռու փոխմարզպետ Ա.Դարբինյանի մոտ կայացած խորհրդակցության

17. 07. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Ա.Ջանազյանը, Ս.Լամբարյանը, Է.Մացակյանը, Վ.Գետրոզյանը, Ժ.Ղազարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Ս.Հարությունյանը, Ա.Դումիկյանը, Հ.Շահբազյանը, Մ.Խոռոյանը- «Լոռու մարզի համայնքների կին ղեկավարներ

Օրակարգում՝

«Լոռու մարզի» տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի հետ «Լոռու մարզի համայնքների կին ղեկավարների հանդիպման ժամանակ բարձրացված «Լոռու մարզի համայնքներում առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Քննարկման արդյունքում պարզվեց,որ

1. Պաղաղբյուր համայնքի 7 կմ մարզային նշանակության ճանապարհի վերանորոգման աշխատանքներն ընդգրկված են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրում:

2. Մեղվահովիտ համայնքի համայնքային կենտրոնի վերանորոգմամբ կլուծվի սպորտային դահլիճի, համայնքապետարանի եւ բուժկետի հարցը՝ ինչը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի հրատապ ծրագրով: Բուժկետի վերանորոգման եւ կահավորման աշխատանքները նախատեսվում է իրականացնել բարեգործական ծրագրերի միջոցներով:

3. Տաշիր քաղաքից դեպի Դաշտադեմ 10կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհի վերանորոգման աշխատանքներն ընդգրկված են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում» ծրագրում:

Առաջարկվեց՝

1. «Լոռու մարզի Բազում համայնքի խմելու ջրի մատակարարման հարցը կարգավորելու համար դիմել «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությանը՝ մասնագիտական եզրակացություն եւ ընկերությանը պատկանող ջրատարին միանալու թույլտվություն ստանալու համար (կատարող՝ Ա.Ջանազյան):

2. Մեղվահովիտ համայնքի ղեկավարի կողմից նշված հանրապետական նշանակության ճանապարհի վերանորոգման համար դիմել «Լոռու մարզի տրանսպորտի եւ կապի նախարարություն (կատարող՝ Ա.Ջանազյան):

3. Դաշտադեմ համայնքում գործող դպրոցի շենքի համար դիմել եւ ստանալ սեյսմիկ եզրակացություն, դրական պատասխանից հետո մի քանի դասասենյակի վերանորոգմամբ կլուծվի համայնքապետարանի եւ բուժկետի հարցը, ինչը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի հրատապ ծրագրով: Բուժկետի վերանորոգման եւ կահավորման աշխատանքները նախատեսվում է իրականացնել բարեգործական ծրագրերի միջոցներով (կատարողներ՝ Ա.Ջանազյան, Ս.Լամբարյան):

Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ